Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(21 սեպտեմբերի, 2021 թ.)

Սիրելի՛ ժողովուրդ ի Հայաստան, Արցախ եւ ի սփյուռս,

Այս տարի լրանում է մեր անկախ պետականության վերահաստատման երեսնամյակը: Երեք տասնամյակ առաջ մեր ժողովուրդը միաբան կամքով, համախումբ եւ միասնական ընտրեց անկախության վերակերտման ճանապարհը՝ խանդավառությամբ եւ ոգեշնչումով իրագործելու իր դարավոր իղձն ու երազանքը: Պետականաշինության, հայրենակերտումի դժվարին ուղի անցավ մեր ժողովուրդը, դիմագրավեց բազում մարտահրավերներ, հանձն առավ մեծ զոհողություններ: Պանծալի հաղթանակների, հաջողությունների ու ձեռքբերումների հետ ունեցանք նաեւ բացթողումներ, սխալ ընթացքներ եւ՛ հայրենական անդաստանում, եւ՛ միջազգային հարթակներում:

Անցյալ տարի ազգովի ենթարկվեցինք նոր փորձության: Ադրբեջանը վերստին պատերազմ սանձազերծեց Արցախի Հանրապետության դեմ: Աղետալի պատերազմի ծանրագույն հետեւանքները եւ ամեն օր նորովի արնահոսող վերքերը բոլորովին նոր իրավիճակ են ստեղծել մեր ժողովրդի կյանքում: Մեր սրտերում մեր կորուստների, մեր զոհված նահատակների, գերյալների ու անհայտ կորածների խոր ցավն է, ապագայի անորոշության անհանգստությունը, բայց նաեւ՝ վճռականությունը՝ վերստին ոտքի կանգնելու, թոթափելու մեզ պատուհասած արհավիրքն ու նեղությունները եւ ապահովելու պայմաններ, որ մեր ժողովուրդն Արցախում ու Հայաստանում ապրի անվտանգ ու բարօր:

Հայրենի երկրի անկախությունը մեծագույն արժեք է: Հայոց եկեղեցին դարերի ընթացքում մշտապես արթուն է պահել անկախության գաղափարը մեր զավակների հոգիներում, օրհնել մեր ազատության մաքառումները, կարելին ի սպաս դրել մերօրյա անկախ հայրենիքի կայացմանն ու առաջընթացին եւ շարունակելու է իր առաքելությունը այս սուրբ գործում:

Անկախության 30-ամյակի գլխավոր խորհուրդն առաջադեմ, բարօր, սիրո ու միաբանության մեջ ծաղկող երկիր վերակերտելն է։ Այսօր, ցավոք, հաճախ ենք տեսնում անհանդուրժողականության դրսեւորում՝ համերաշխության ու երկխոսության փոխարեն։ Մեր երկրի ու ժողովրդի առջեւ ծառացած հիմնախնդիրները պահանջում են միասնականություն, ջանքերի մեկտեղում եւ համախոհ նպատակադրումների իրականացում։ Թանկ գնով ձեռք բերված անկախությունը համազգային միասնականությամբ պիտի պաշտպանենք ու պահպանենք՝ հաղթահարելով ներքին ու արտաքին մարտահրավերներն այս սրբազան առաքելության ճանապարհին, քանզի մեր անկախ պետությունը մեր գոյության ու լինելիության կարեւորագույն խարիսխն ու գրավականն է։

Անկախության տոնի առիթով հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում համայն մեր ժողովրդին եւ հորդորը՝ ամուր մնալու հավատքի մեջ, ընթանալու Աստծու պատգամներով, համախմբված հայրենիքի շուրջ, հայրենյաց սիրով ու եղբայրությամբ իրականացման առաջնորդելու ազգային մեր լուսավոր իղձերը։

Աղոթք ենք վերառաքում առ երկնավոր Տերը, որ խաղաղություն շնորհի աշխարհին, մեր հայրենիքին, ստեղծագործ ու անվտանգ կյանք՝ ազգիս զավակներին, այսօր եւ միշտ. ամեն։